Մրցույթ՝ ՀՀ Տավուշի մարզի «Չինարիի Վ. Սաղոյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 3 դասվար՝ 18-ական դասաժամ, Ֆիզիկա՝ 8 դասաժամ, հայոց լեզու և գրականություն՝ 22 դասաժամ, ԹԳՀԳ՝ 10 դասաժամ, տեխնոլոգիա՝ 4 դասաժամ ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին: Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում /Ձև 1/, լուսանկար 3x4 չափի

-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ /դիպլոմ/

-անձը հաստատող փաստաթուղթ

-<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան ՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը /առկայության դեպքում/

-ինքնակենսագրություն /Ձև 5/

-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ

-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ , բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել կամ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հրապարակման օրվանից մինչև ապրիլի 16-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **ապրիլի 18-ին՝ ժամը 14:00-ին**, Տավուշի մարզի Չինարիի Վ.Սաղոյանի անվան միջնակարգ դպրոցում: Տեղեկությունների համար զանգահարել /093/ 11-52-76 հեռախոսահամարով: